



ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԴՐԱԿԱՎԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Ս.Յ.ԽԴ. ԻԹ. ՏԱՐԻ.

ՀԱՄԱԵՐ ԱՌԹՆԵՐՈՐԳ

ՕԳՈՍՏՈՍ 1895 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ

- Մինչև յերթ, Տէր, բարկամաս դու իսպառ
բոլորեցես ինչ որ նախանձ քո ։
- Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի,
ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ ։
- Ընդէն քակեցեր զքանկ նորա, եւ կթեն զնա
անցաւորք ծանապարհի ։
- Աստուած զօրութեանց, դարձ, հայեանց յերկ-
նից եւ տնս, այց արա այգւոյս այսմիկ
եւ զարման տար սմա, զոր տնկեաց
աջ քո ։

Ինչպէս ամէն մի անհատի կեանքում լինում են բուսկներ, երբ նա երկար ժամանակ թաղցրած վիշտն այլևս պահել չէ կարող, ողբ ու արտասուքով մի ելք պէտք է տայ նորան, այդպէս և ամբողջ ազգութիւններ ունենում են մի ընդհանուր վիշտ, որ բազմութեան սրտերի վերայ է ծանրանում շատերի կրօնքից

խուլ հառաչանքներ դուրս կորգում մինչև կդառնա տանձնաշնորհեալ մէկը որի ներսում ամէնքին մաշող ցաւերը կուտակուած՝ կբռնկեն յանկարծակի և յառաջ կբերեն մի բարբառ, դարէ ի դար մարդոց հոգու խորքերը թափանցելու ընդունակ։

Ահա այդ ճաշխարհիկ բարբառով իւր ժողովրդի Սիոնի հալածեալ որդւոց, վիշտն է ողբում աստուածային երգիչը վերև յիշուած և ուրիշ նման հոգեշունչ սաղմոսների մէջ։ Յանձափս սիրելի են եղել այդ սաղմոսները մեր հայրերին, անընդհատ նեղութեան և հալածանքի մէջ նոցա հոգեւոր կերակուրը

կազմել, նոցա վշտաբեկ սրտի ամենանուրբ զգացումներին թարգման հանդիսացել: Քրիստոնեայ ժողովուրդների ոչ մէկն իւր անցեալով այնքան նման չէ հին Խարայէլին, ինչքան մեր խեղճ ազգը, ուստի և ոչ ոք զուցէ այնպէս խոր կերպով չէ ըմբռնել սաղմոսերգութի մրմունջները, ոչ ոք այնպէս իրաւամբ իւր վերայ առել, իւր իսկ սրտից բոխած համարել այն կսկծալից պաղատանքները, որ հին Սիոնի որդիք՝ դէպի Բարձրեալն էին ուղղում՝ ինչպէս մի նոր Սիոնի շուրջ խմբուած Լուսաւորչի բուռն ժողովուրդը: Եւ այս տաղնապալից պահուն, երբ նա կրկին մի անգամ օրհասական կոչւ ստիպուած է վարել իւր զոյութեան համար՝ ի՞նչ ձայն աւելի ազդու կերպով նորա ցաւերի բոլոր դառնութիւնն արտայայտել կարող է, նորա հեծութեան ազաղակները երկինք հասցնել, քան Խարայէլեան հին սաղմոսը:

Երդէն ամբողջ տարի եղաւ, չասենք երկայն մի շարք տարիների, ինչ այդ ժողովուրդն իրրեւ մի մերձիմահ հիւանդ, որի վերքերն կտրտում ու զննում են օտար անողորմ վիրաբոյժների, առանց ուշ դարձնելու, թէ զգայուն նեարդերի հետ գործ ունին, նոցա վերջնական դատաւճռին է սպասում՝ կեանք կամ մահ, և Հայաստանեայց եկեղեցւոյ Մայր Եթոռը, որ կեդրոնն է դժբաղդ վիրաւորի կենսական զօրութեան, չէր կարող անտարբեր մնալ և այդ սպասողական վիճակի բոլոր տաղնապը զգացած չլինել: Նա համբերել է մինչև այժմ՝ խեղդելով իւր սրտի մրմունքը, բայց ահա՛ պայթում դուրս են թռչում վերջապէս յակամայից անզուսպ հառաչանքներն, ու ազերսախառն մի հայեացք դէպի Միածին Որդին ուղղուելով՝ մրմնջում է յուսարեկ ձայնիւ. Մինչև յերբ, մինչև յերբ, Տէր:

Սակայն այստեղ հեծութեան ձայներին անէծք ու նղովք չի խառնուում, ինչպէս Խարայէլեան սաղմոսների մէջ է, մենք տարբեր ոգւոյ զաւակներ ենք և համաձայն այդ ոգւոյ օրհնել կարող ենք և ոչ երբեք անիծել, ուստի և ամենայն դատաստան Լմենակալ Դա-

տաւորի արդարութեան յանձնելով, մենք միայն նորա զթութիւնն ենք հայցում նոր Սիոնի տարապիր որդւոց դժբաղդ կացութեան վերայ:

Շուտով ահա ամառուայ ջերմ օրերը տեղի կտան ցրտաշունչ ձմրան և աշխարհի մի խուլ անկիւնում, քաղաքակիրթ ազգերի աչքից հեռու կմնայ զուցէ կրկին մեր խեղճ հայ ժողովուրդն անտէր, անօգնական, մարդոց և բնութեան անողոր չալածանքին մատնուած, ի՞նչ կլինի նորա վիճակը, եթէ Սիոնի Տէրը վաղօրօք դիպող ժամուն օգնութեան ձեռք չկարկառէ: Նա, որ կարեկցութեան զգացումներով լեցրեց հեռաւոր երկրների բնակչաց սրտերը, արքունիքներում ու դիւաններում յիշեցրեց, աշխարհի տէրերի բերանը դրաւ հայութեան մոռացուած անունը. Նա որ այդ անունը կենդանի է պահել դարերի ամենակուլ հոսանքում՝ Լուսաւորչի մեծ Լստուածը, այժմ Նա է մեր յոյսն ու ապաւենել անձկութեան մէջ, և ժամանակ է, որ դէպի Նա դառնան մեր մոլորեալ աչքերը, մեր խորթացած և անտպատ սրտերը, Նորան որոնեն մաքուր և ջերմութեան շունչով երկնաթռիչ թևերի վերայ, և ընդհանուրի վիշտը միաբան սիրով հասարակաց Հօր առաջ զննելով՝ աղերսեն. «Երբ, Տէր, օգնեա՛ մեզ, և փրկեա՛ զմեզ վասն անուան քո»։ «Լստուած զօրութեանց՝ դա՛րձ, հայեաց՝ յերկնից և տես, այց արա՛ այգւոյս այսմիկ և դարման տա՛ր սմա՛ զոր տնկեաց աջ քո»։

Կ. Վ.

